



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

06.10.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/58

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.09.2017թ. թիվ 03/26-3/16948-17 գրությամբ Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 12.09.2017թ. թիվ 10/14/16130-17 գրության հիման վրա, 20.09.2017թ. թիվ 03/26-3/16948-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. Զավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 22.09.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/17079-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է Զավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ին, սակայն վերջինիս կողմից գրավոր կարծիք չի ներկայացվել:

Զավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.09.2017թ. ժամը 11:20-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր մասնակցությունը:

Խորհրդի կողմից նիստը հետաձգվել է՝ հաջորդ նիստին վերջինիս ներկայությունը ապահովելու նպատակով:

Զավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 03.10.2017թ. ժամը 11:15-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայությունը նիստին, ով հայտնել է, որ մասնակցել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ԱՆ-ԳՀԱՊՁԲ-15/9-17/2» և «ՀՀ ԱՆ-ԳՀԱՊՁԲ-15/9-17/3» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերին, որոնց շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն՝ Զավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 4 400 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Զավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն նիստի ընթացքում Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից տրամադրված տեղեկանքները՝ առ այն որ 11.08.2017թ. և 14.08.2017թ. դրությամբ Զավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն ունեցել է դեբետային մնացորդ 86 364 ՀՀ դրամի չափով: Զավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն հայտնել է նաև, որ քանի որ ունեցել է երկու հարկատեսակի գծով գերավճար ապա ենթադրել է, որ վերջինս կհաշվանցվի:

3. ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ արդարադատության նախարարությունը 12.09.2017թ. թիվ 10/14/16130-17 գրությամբ ներկայացրել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի կողմից կազմակերպված «ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-15/9-17/2» և «ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-15/9-17/3» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ընթացակարգերի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների ճշտման համար սահմանված կարգով հարցում է կատարվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, որին ի պատասխան՝ եզրակացությամբ պարզվել է, որ Զավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն Ընթացակարգերին մասնակցելու հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 4 473 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ, որը Ընթացակարգերի 1-ին չափաբաժինների մասով վերջինիս հայտերի մերժման հիմք է հանդիսացել և 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Վահագն Խաչատրյան Ա/Ձ-ն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 26.09.2017թ. ժամը 11:20-ի և 03.10.2017թ. ժամը 11:15-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/58 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/58 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-15/9-17/2» և «ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-15/9-17/3» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգեր (այսուհետ՝ Ընթացակարգեր), որոնց մասնակցելու նպատակով Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն 09.08.2017թ. հայտեր է ներկայացրել:

2. Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն Ընթացակարգերի մասնացության հայտերի թիվ 2 հավելվածներով հայտնել և հավաստել է, որ Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն բավարարում է Ընթացակարգերի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն «ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-15/9-17/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտի N 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 220 800 ՀՀ դրամ, իսկ «ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-15/9-17/3» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտի N 5 հավելվածով ներկայացրած գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 222 000 ՀՀ դրամ:

4. Պատվիրատուն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով (այսուհետ՝ Կարգ) սահմանված կարգով 14.08.2017թ. և 17.08.2017թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն. զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

5. ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտեի կողմից 22.08.2017թ. և 23.08.2017թ. տրամադրված եզրակացությունների համաձայն՝ Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն (հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 4 473 ՀՀ դրամի չափով:

6. Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովները՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունները,

28.08.2017թ. ժամը 17:00-ի և ժամը 17:30-ի նիստերի թիվ 3 արձանագրություններով կայացրած որոշումներով Ընթացակարգերի 1-ին չափաբաժինների մասով Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ի հայտերը մերժել են:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.09.2017թ. թիվ 03/26-3/16948-17 գրությունը, ՀՀ արդարադատության նախարարության 12.09.2017թ. թիվ 10/14/16130-17 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա

լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված

տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի կարիքների համար գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-15/9-17/2» և «ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-15/9-17/3» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգեր, որոնց մասնակցելու նպատակով Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն 09.08.2017թ. հայտեր է ներկայացրել:

Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն «ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-15/9-17/2» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտի N 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 220 800 ՀՀ դրամ, իսկ «ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-15/9-17/3» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է 222 000 ՀՀ դրամ:

Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն Ընթացակարգերի մասնացության հայտերի թիվ 2 հավելվածներով հայտնել և հավաստել է, որ Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն բավարարում է Ընթացակարգերի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով 22.08.2017թ. և 23.08.2017թ. տրամադրված եզրակացությունների համաձայն՝ Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն (հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 4 473 ՀՀ դրամի չափով, որը հիմք ընդունելով Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովները 28.08.2017թ. ժամը 17:00-ի և ժամը 17:30-ի նիստերի թիվ 3 արձանագրություններով կայացրած որոշումներով Ընթացակարգերի 1-ին չափաբաժինների մասով Ջավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ի հայտերը մերժել են:

Ամփոփելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ Հավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ի կողմից հայտերի N 2 հավելվածներով ներկայացված հայտարարությունները՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասով, չեն համապատասխանում իրականությանը (կեղծ տվյալ), քանի որ վերջինիս հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները գերազանցում են ներկայացրած գնային առաջարկների մինչև մեկ տոկոսը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սրանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պարզվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով, Հավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն հայտերի թիվ 2 հավելվածներով հայտնել և հավաստել է, որ բավարարում է մրցույթների հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, որը ժամկետանց հարկային պարտավորությունների մասով հետագայում ստուգվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե համապատասխան հարցում ներկայացնելով: Արդյունքում արձանագրվել է, որ վերջինիս կողմից ներկայացված վերը նշված հայտարարությունները չեն համապատասխանում իրականությանը (կեղծ տվյալ), այլ կերպ ասած առկա է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, որի պարագայում Հավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ն չի կարող մասնակցել գնումների գործընթացին: Միևնույն ժամանակ համապատասխան հայտարարությունն իրականությանը չհամապատասխանող գնահատվելու դեպքում չի կարող արձանագրվել մասնակցի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմքի առկայություն, քանի որ մասնակիցը տվյալ դեպքում ի սկզբանե գնման գործընթացի շրջանակում չի ստանձնել որևէ պարտավորություն, որը խախտվել է, կամ թույլ չի տվել պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում, կամ չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև չի հրաժարվել պայմանագիր կնքելուց: Այլ ներկայացրել է հայտարարություն, որը ստուգվել է սահմանված կարգով և որի՝ իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը հիմք է հայտը մերժելու, այլ ոչ թե Ցուցակում ներառելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ **գնման գործընթացը** գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, **իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է**, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, **հանդիսանում է մասնակցի իրավունքը**: Մինևույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը, մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակներում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու փաստը, որի հետևանքով Հավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտարարությունները որակվել են իրականությանը չհամապատասխանող (կեղծ տվյալ), համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, ուստի խորհուրդը գտնում է, որ
Զավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Զ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք
չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի
7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 20.09.2017թ. թիվ 03/26-3/16948-17 գրությամբ
Զավեն Եղիազարյան Սերյոժայի Ա/Զ-ին (ՀՎՀՀ՝ 86215812) գնումների գործընթացին
մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով
նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական
կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ